

ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Զմռան մշուշաքողն է իջել Արարատյան աշխարհին և շուրջբոլոր վարդարել արծաթյա եղյամով: Արարիչն Աստված վարդարել է ամեն ինչ՝ Իր Որդու և մարդկության Փրկչի ծննդյան տոնը շքեղության մեջ տոնելու համար:

Լույս է ճառագում Միածնաէջ տաճարի Իշման ս. սեղանից, լույսեր, որոնք բռնկվել են Աստվածորդու հրաշափառ Աջից և լուսավորում են մինչև այսօր՝ ջերմացնելով, հույսով ու մխիթարությամբ լցնելով հավատացյալների հոգիները: Մարդիկ խումբ-խումբ առաջնորդվում են Մայր եկեղեցի՝ իրենց աղոթքները միացնելու օրվա խորհուրդին:

Հունվարի 5-ին, շաբաթ.—Ճրագալույց Ծննդեան և Աստուածայայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Երեկոյան ժամը 17-ին տեղի են ունենում «Ճաշու» և «Երեկոյան» ժամերգությունները: Սաղմոսերգու դպիրների երգեցողության հետ հնչում են տաճարի զանգերը: Զանգակների դողանջների ներքո եկեղեցական թափորը Վեհափառ Հայրապետին Վեհարանից առաջնորդում է դեպի Մայր տաճար:

Այնուհետև ընթերցվում են «Ծննդոց» գրքից որոշ հատվածներ, և Ավագ խորանից դպիրներն ընթերցում են Դանիելի մարգարեության «Երից մանկանց» նվիրված հատվածը:

Բացվում է վարագույրը, և դպրաց դասը ի լուր ամենքի ավետում է Փրկչի հրաշափառ ծննդյան ավետիսը. «Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ»:

Օրվա պատարագիչն է Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես եպս. Պոլատյանը:

Հոգեպարար արարողությունը խաղաղության և փրկության ավետումն էր հանուր մարդկության:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈԶ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

Հունվարի 6-ին, կիրակի.—Տօն Ծննդեան և Աստուածայայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Առավոտյան ժամերգությունից հետո Մայր տաճարում, ժամը 11-ին, սկսվում է հանդիսավոր պատարագը:

«Հրաշափառ» շարականի երգեցողության ներքո Վեհափառ Հայրապետը մտնում է եկեղեցի՝ եպիսկոպոսների, վարդապետների, քահանաների և սարկավագների ուղեկցությամբ:

Թափորը հանդիսավորությամբ բարձրանում է Ավագ խորան, որտեղից Ս. Ծննդյան պատարագ է մատուցում Նորին Սրբություն Ամենայն Հայոց Հայրապետը: Ս. պատարագի ընթացքում ս. սեղանին և Վեհափառ Հայրապետին սպասարկում են Վրաստանի Հայոց թեմի առաջնորդ Տ. Գևորգ եպս. Սեդրայդարյանը, Տ. Հայկազուն վարդապետ Նաջարյանը, Տ. Շնորհք աբեղա Բաղդասարյանը և սարկավագաց դասը:

Սփյուռքից և մայր հայրենիքի տարբեր վայրերից Ս. Էջմիածին ուխտի են եկել բազմաթիվ հավատացյալներ:

Ս. պատարագին ներկա են ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ տիար Ա. Հասրաթյանը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները և հյուրաբար Մայր Աթոռում գտնվող ֆրանսիացի հայագետ գիտնականներ տեր և տիկին Ժան-Միշել և Նիկոլ Թիերիները:

Նորից հնչում է ծննդյան մեծ ավետիսը. «Քրիստոս ծնաւ և յայտնեցաւ»: Եվ հոգու խաղաղությամբ ու բերկրանքով լի աչքերով Վեհափառ Հայրապետը ս. սեղանից ժողովրդին է փոխանցում կենսաբեր այդ ավետիսը և մաղթում ամենքին, այնքան ցանկալի, երկնային խաղաղությունը:

«Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի ոգեշունչ և իմաստալից քարոզ է խոսում Վեհափառ Հայրապետը (տես էջ 3):

Հավարտ ս. պատարագի, պատարագիչ Հայրապետի նախագահությամբ, կատարվում է Զրօրհնէքի հանդիսավոր արարողությունը: «Ով կարմանալի» տաղի երգեցողությունից հետո մեռոնանիշից կաթիլ-կաթիլ սրբալույս մեռոնն ընկնում է ջրի մեջ: Տաղերգուն ձայնակցում է երգեցողությանը ավելի հաստատելով օրվա խորհուրդը. «Այսօր արևն արդարութեան, երևեցաւ ի մէջ մարդկան»: Եվ կարծես այդ պահին աշխարհի Փրկիչը կանգնած Հորդանան գետում ստանում է երկնային մկրտությունը ձեռամբ Հովհաննես Մկրտչի:

«Խորհուրդ մեծ եւ սքանչելի, որ յայսմ աւուր յայտնեցաւ,
Հովիւքն երգեն ընդ հրեշտակս տան աւետիս աշխարհի»:

Ոսկեդարյան այս շարականը երգելով եկեղեցական թափորն առաջնորդվում է Վեհարան:

Վեհարանում Հայոց Հայրապետը սիրո և գոհության Իր օրհնություններն է տալիս Մայր Աթոռի միաբանությանը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամներին և Մայրավանքի պաշտոնեությանը:

Վերջում տեղի է ունենում հյուրասիրություն, ուր փոխանակվում են Նոր տարվա և Սուրբ Ծննդյան մաղթանքներ: Հյուրասիրությանը ներկա են գտնվում պաշտոնական անձինք և հյուրաբար Մայր Աթոռում գտնվող ֆրանսիացի հայագետ գիտնականներ տեր և տիկին Ժան-Միշել և Նիկոլ Թիերիները: